«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Հետազոտության թեման՝** Ուսուցչի համագործակցումը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

**Հետազոտող ուսուցիչ՝** Մարիամ Մուշեղյան

**Մենթոր ուսուցիչ՝** Նարինե Վասիլյան

**Արմավիրի Խանջյանի Ա.Բ. Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց**

ԱՐՄԱՎԻՐ 2023

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան----------3

1. Դպրոցի և ընտանիքի դերը երեխայի անձի զարգացման գործում----------5

2. Դպրոցի և ընտանիքի համագործակցության խնդիրները----------10

3. Դպրոցի և ընտանիքի համագործակցության մեթոդները և ձևերը----------13

Եզրակացություն----------17

Օգտագործված գրականության ցանկ----------19

## Նախաբան

*Հետազոտության թեմայի արդիականությունը*: Երեխաների դաստիարակության և կրթության խնդիրների հաջող իրագործումը հնարավոր է միայն դպրոցի և ընտանիքի փոխազդեցության և համագործակցության պայմաններում: Ժամանակակից միջավայրում և հասարակական զարգացման պայմաններում դպրոցի և ընտանիքի համագործակցությունը առավել արդիական և պահաջված է դառնում: Ուսուցման գործընթացի լիարժեք կազմակերպման և երեխայի անձի ձևավորման համար անհրաժեշտ է ձևավորել համապատասխան միկրոմիջավայր ուսուցիչների և ծնողների միջև, հենց աշակերտների միջև, ընդհանուր առմամբ կրթական հաստատությունների և ընտանիքների միջև: Ընտանիքը – հասարակական կոլեկտիվի մի մասն է, աճող սերունդի հաջող սոցիալականացման կարևորագույն ինստիտուտը: Որ կողմից էլ մենք դիտարկենք անձի զարգացումը, միշտ էլ կհանգենք այն եզրակացության, որ անձի զարգացման յուրաքանչյուր փուլում կարևոր դեր է կատարում ընտանիքը:

Ժամանակակից պայմաններում դպրոցի հիմնական խնդիրներից մեկն է ընտանիքում՝ երեխաների հանդեպ համապատասխան վերաբերմունքի և հետաքրքրության ձևավորումն է: Սա նշանակում է, որ մանկավարժները կարող են և պետք է օգնեն ծնողներին ճիշտ վերաբերվել իրենց երեխաներին՝ հասարակության համար պիտանի անդամ մեծացնելու և դաստիարակելու համար: Նաև մանկավարժները ի զորու են աջակցել ծնողներին երեխաների զարգացմանը հետևելու, ճիշտ ուղղորդելու գործում, երեխաների մոտ տեղի ունեցող փոփոխությունները ընկալելու և ճիշտ գնահատելու գործում: Միայն այս ամենի հիմնա վրա է հնարավոր կազմակերպել դպրոցի և ընտանիքի արդյունավետ համագործակցությունը՝ երեխայի ուսոցման և դաստիարակության ընթացքում:

Երեխաների դաստիարակությունը – ծնողների կառուցողական պարտականությունն է: Նրանք կոչված են բազմակողմանիորեն ամրապնդել դպրոցի և ուսուցչի հեղինակությունը երեխայի գիտակցության մեջ, երեխաներին դաստիարակել աշխատանքի, հասարակության համար օգտակար գործունեության հանդեպ սիրո մթնոլորտում, պատրաստել նրանց հասարակության պիտանի անդամ

դառնալուն: Բացի այդ, ծնողների գործառույթներից է երեխաներին սովորեցնել կարգապահություն, հոգ տանել նրանց ֆիզիկական զարգացման և առողջության ամրապնդման մասին, խթանել երեխաների ուսումնական գործունեությունը և գիտակից վերաբերմունքը մասնագիտության ընտրության հարցում: Բնականաբար, դպրոցը պետք է օգտագործի այս օգնությունը աշակերտների ընտանիքների կողմից:

Բացի այդ, դպրոցը չի կարող հաշվի չնստել այն փաստի հետ, որ ընտանիզքի ազդեցությունը երեխայի զարգացման և ձևավորման վրա մեծապես կախված է վաղ դաստիարակության արդյունքից:

*Հետազոտության նպատակն է* ուսումնասիրել դպրոցի և ընտանիքի համագործակցությունը և դրա ազդեցությունը մանկավարժական գործընթացի հաջողության և արդյունավետության վրա:

Ելնելով հետազոտության նպատակից, առաջադրվել են հետևյալ *խնդիրները*.

1. Դիտարկել դպրոցի, որպես սոցիալական ինստիտուտի, դերը երեխայի անձի զարգացման գործում;
2. Ուսումնասիրել դպրոցի և ընտանիքի համագործակցության մեթոդները;
3. Ուսումնասիրել դպրոցի և ընտանիքի համագործակցության ձևերը:

## 1. Դպրոցի և ընտանիքի դերը երեխայի անձի զարգացման գործում

Բազմաթիվ սոցիալական ինստիտուտների թվում ընտանիքը, որպես սոցիալական ինստիտուտ, առաջնային տեղն է զբաղեցնում: Չի կարելի ժխտել և բացառել դրա առաջնային ազդեցությունը երեխայի վրա, քանի որ այն հիմք է ստեղծում երեխայի ապագա հասարակական կյանքի համար:

Ընտանիքը – աճող սերունդի դաստիարակման հիմնական ճյուղն է, իսկ մյուսը, ընտանիքից զատ, հենց հասարակական դաստիարակությունն է: Այսօրվա դրությամբ թեժ բանակցությունների թեմա է այն, թե ինչն է ավելի մեծ և կարևոր դեր կատարում երեխայի անձի ձևավորման և կայացման գործում՝ ընտանի՞քը, թե՞ հասարակական դաստիարակությունը (մանկապարտեզ, դպրոց, այս կրթական հաստատություններ): Ժամանակակից գիտությունը միահամուռ է այն հարցի շուրջ, որ հնարավոր չէ հրաժարվել ընտանեկան դաստիարակությունից՝ առանց նշանակալի և անդառնալի վնաս հասցնելու երեխայի անձի զարգացմանը, քանի որ ընտանկան դաստիարակության հետ ոչինչ չի կարելի համեմատել, նույնիսկ ամենաբարձր որակավորում ունեցող մասնագետների ներազդեցությունը երեխայի անձի զարգացման վրա:

Ժամանակակից ընտանիքը, սակայն, չի կարող երեխային դաստիարակել այլ հասարակական դաստիարակչական ինստիտուտներից զատ, մեկուսացված: Այսպես, երեխան հաճածում է մանկապարտեզ, դպրոց, տարբեր խմբակների է հաճախում, սպորտով է զբաղվում և այլն:

Հաշվի առնելով ընտանեկան դաստիարակության ամբողջ յուրահատկությունը և անփոխարինելիությունը, միաժամանակ չի կարելի բացառել այն փաստը, որ միայն ընտանիքը չի կարող ապահովել այն բոլոր պայմանները, որոնք անհրաժեշտ են երեխայի ներդաշնակ և բազմակողմանի զարգացման, կրթման համար: Այդ պատճառով այսօրվա դրությամբ խոսքը գնում է ոչ թե այն մասին, որ ընտանեկան դաստիարակությունը պետք է փոխարինել հասարակական դաստիարակությամբ, այլ այն մասին, որ դրանք պետք է փոխադարձ լրացնեն իրար՝ երեխայի անձի կերտման գործում: Այլ կերպ ասած, ծնողները և պրոֆեսիոնալ մանկավարժները պետք է մշտապես համագործակցեն միմյանց հետ՝ ներդաշնակ անձ ձևավորելու ընթացքում:

Ընտանիքը հանդես է գալիս, որպես միջնորդող օղակ, երեխային՝ սոցիալական-պատմական փորձի փոխանցման հարցում, և նախ և առաջ՝ մարդկանց միջև էմոցիոնալ և գործնական փոխհարաբերությունների ձևավորման փորձի:

Հաշվի առնելով այս հանգամանքը՝ կարելի է վստահաբար ասել, որ ընտանիքը եղել է, կա և միշտ կմնա այն կարևորագույն սոցիալական ինստիտուտը, որն ապահովում է երեխայի դաստիարակությունը, առաջնային սոցիալականացումը: Ժամանակակից գիտությունը տիրապետում է բազմաթիվ տվյալների, որոնք վկայում են այն մասին, որ ընտանեկան դաստիարակությունը նպաստում է երեխայի մոտ՝ կենսական կարևոր պատկերացումների, արժեքների ձևավորմանը:

Դեռևս մի քանի դարաշրջան առաջ գիտնականները նկատել են, որ յուրաքանչյուր հաջորդ դաստիարակը ավելի քիչ ազդեցություն է թողնում երեխայի վրա, քան նախորդը: Տնային դաստիարակության յուրահատկությունը կայանում է, նախ և առաջ, դրա առաջնայնության մեջ, ծնողների հատուկ դերի մեջ երեխայի կյանքում՝ ելնելով նրանցից կենսաբանական և հոգեբանական կախվածության փաստից [Азаров 2011: 93]:

Գիտնականները և հոգեբաններն առանձնացրել են երեխաների այն յուրահատկությունները, որոնք բնորոշ են նրանց կյանքի առաջին տարիներին և որոնք պայմանավորում են նրանց առավելագույն զգայունությունը դաստիարակության և ուսուցման նկատմամբ: Այդպիսի յուրահատկությունների թվին են դասվում բարձրագույն նյարդային համակարգի և հոգեկան գործընթացների պլաստիկությունը և ճկունությունը, նմանակելիությունը և էմոցիոնալությունը: Դաստիարակման գործընթացը օպտիմիզացվում է երեխայի մոտ արժեքային պահանջմունքների զարգացման հաշվին, որոնց թվին կարելի է դասել շփվելու, հաղորդակցվելու պահանջը, նոր տպավորություններ ձեռք բերելու պահանջը, սեր և հոգատարություն ստանալու և բազմաթիվ այլ պահանջներ:

Կյանքի առաջին իսկ օրերից երեխային շրջապատում են բազմաթիվ մարդիկ, առարկաներ, բնությունը: Սակայն, ոչ բոլոր մեծահասակներն են և ոչ ամեն միջավայրն է նպաստում երեխայի բարեհաջող զարգացմանը ծնվելու պահից: Այսպես, ընտանիքից, ծնողներից կտրված երեխայի մոտ նվազում է ընդհանուր հոգեբանական տոնուսը, էմոցիոնալ-զգայական փոխազդեցությունների մակարդակը, և, որպես

հետևանք, կասեցվում է մտավոր զարգացումը: Որքան ավելի շուտ է երեխան կտրվում իր ծնողական ընտանիքից, այնքան ավելի մեծ և տևական մեկուսացման մեջ է նա հայտնվում իր հոգեկան գործընթացներում, և այնքան ավելի նկատելի են դառնում իր հոգեկան զարգացման բոլոր թերությունները, դեֆորմացիաները [Бороздина 2011: 47]:

Ինչպես ցույց են տալիս հոգեբանական-մանկավարժական հետազոտությունները, շրջապատող աշխարհի ամբողջ բազմազանության մեջ, որն այսպես թե այնպես ազդեցություն է գործում փոքր երեխայի ներաշխարհի, զարգացման վրա, հատուկ նշանակություն ունի «շփման նեղ շրջանակը»: Այդ շրջանակի մեջ են մտնում ծնողները և այլ հարազատները, որոնք բավարարում են երեխայի պահանջմունքը՝ պաշտպանված և սիրված լինելու, և ում զգայական կերպարը ամրապնդվում է երեխայի գիտակցության մեջ հետագա ամբողջ կյանքում:

Ահա թե ինչու են գիտնականներն ընգծում ընտանիքի, որպես սոցիալական ինստիտուտի, նշանակալի դերը երեխայի անձի զարգացման գործում, համեմատած այլ դաստիարակչական նշանակություն ունեցող սոցիալական ինստիտուտների հետ, ինչպիսիք են մանկապարտեզը, դպրոցը, այլ հաստատությունները:

Ընտանեկան դաստիարակության զգայական բնույթը հիմնված է արյունակցական կապի վրա, և դրա կրողներն են ծնողները իրենց սիրով և հոգատարությամբ երեխաների նկատմամբ, ինչպես նաև երեխաների կողմից դրսևորվող պատասխան զգացողությունները և զգացմունքները ծնողների, ընտանիքի այլ անդամների նկատմամբ՝ կապվածություն, վստահություն, քնքշություն:

Սակայն, դա միակ գործոնը չէ, որն ապահովում է ընտանեկան դաստիարակության արդյունավետությունը, կայունությունը: այսպես, Ն.Ա. Զեմլյանուխինայի հետազոտության շրջականերում կարող ենք առանձնացնել ևս երկու կարևոր գործոներ.

- Մայրիկի, հայրիկի, ընտանիքի այլ անդամների դաստիարակչական ազդեցությունների տևական բնույթը և կայունությունը ամենատարբեր կենսական իրավիճակներում, դրանց կրկնելիությունը ամեն օր;
- Օբյեկտիվ հնարավորությունների առկայությունը՝ երեխային ներգրավելու համար ընտանիքի կենսական, տնտեսական, դաստիարակչական գործունեության մեջ:

Ընտանեկան դաստիարակության ունիկալությունը և յուրահատկությունն ընդգծելու և լրացնելու համար նշենք, որ լինելով փոքր խումբ, ընտանիքն առավել լիարժեք կերպով ներգործում է երեխայի վրա, նրա մոտ հարմարվողականություն է ձևավորում հասարակական կյանքի նկատմամբ, ընդլայնում է նրա աշխարհայացքը և փորձը: Միաժամանակ, հարկավոր է հաշվի առնել, որ ընտանիքը միասեռ չէ, այլ իրենից ներկայացնում է դիֆֆերենցիցացվող սոցիալական խումբ: Դրանում առկա են տարբեր տարիքային խմբերի, սեռական պատկանելիության, մասնագիտությունների ներկայացուցիչներ: Դա թույլ է տալիս երեխային առավել լայն դրսևորել սեփական հնարավորությունները, ավելի արագ և լիարժեքորեն իրագործել սեփական պահանջմունքները:

Երեխայի կյանքը իր մեջ ընդգրկում է երկու աշխարհ: Առաջինը առօրյա աշխարհն է, որն ընդգրկում է ընտանիքը և ընկերների հետ խաղալու միջավայրը, որտեղ երեխան ապրում է տնային հոգսերով: Նա կապված է, առաջին հերթին, ծնողների և բակի երեխաների հետ. Դա նրա զբաղմունքների աշխարհն է: Իսկ մյուս աշխարհը այն աշխարհն է, որտեղ երեխանները նախ և առաջ ուղղված են դաստիարակության և գիտելիքներ ստանալուն, մի աշխարհ, որտեղ երեխան գտնվում է ուժեղ պայքարի մեջ իր ընկերների հետ երբ հարցը վերաբերում է գնահատականներին:

Դպրոցը հանդիսանում է սոցիալականացման գլխավոր, միաժամանակ ամենախրթին ինստիտուտներից մեկը: Այստեղ առնչվում և ներդաշնակվում են մարդու կյանքի ամենատարբեր կողմերը: Պարզվում է, որ հաջող ուսում ստանալու համար բավական չէ ունենալ բնածին ընդունակություններ [Պետրովսկի 19972: 78]:

Շատ մեծ նշանակություն ունեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են ընտանիքի նյութական բարեկեցությունը և հոգևոր մթնոլորտը, երեխայի ֆիզիոլոգիական և հոգեբանական առանձնահատկությունները, բակի շրջապատը, որտեղ ամեն օր նա մտնում է, և այլն:

Երեխային օգնելու համար պետք է ազդել ոչ միայն նրա, այլ նաև շրջապատող սոցիալական միջավայրի վրա, որի տակ պետք է հասկանալ բնական և սոցիալական այն պայմանները, որտեղ ընթանում է անձի աճը, և որը որոշում է նրա գործունեության բնույթը: Սոցիալական միջավայրի և անձի փոխկապվածության արդյունքում

կազմվում է անձը: Ահա թե ինչու սոցիալական աշխատողների գործունեությունը չի կարող սահմանափակվել միայն դպրոցով:

Կարևոր է նշել, որ երեխայի սոցիալականացման գործընթացը իրականանում է նրա գործունեության հիմքի վրա: Այսպես դպրոցի ներսում մանկավարժների հիմնական խնդիրն է երեխաների մոտ զարգացնել ուսումնադաստիարակչական գործունեությունը: Իսկ դրա համար պետք է երեխայի մեջ հետաքրքրություն առաջացնել ուսման նկատմամբ, ստեղծել մի շարք պայմաններ, բարենպաստ հոգեբանական կլիմա, ավելի հարմարավետ միջավայր որտեղ երեխան կարող է իրականացնել իր հետաքրքրությունները, առաջ բերել նախաձեռնություն, մասնակցել մի շարք խնդիրների որոշմանը, սովորել ինքնապաշտպանություն և այլն [Մախչանյան 1997: 96-97]:

Որքան մեծանում է երեխան, այնքան առաջնային են նրա համար ոչ թե ուսումնական գործունեությունը, այլ սոցիալական նշանակությունը, զբաղմունքի ազատ ընտրության հնարավորությունը, համաձայն սեփական ընդունակությունների և ցանկությունների:

Կարելի է եզրակացնել, որ ուսուցումը անհնար է առանց անձի ամբողջական ձևավորման, այլապես դասավանդումը կհանգեցնի որոշակի գիտելիքների կուտակմանը, բայց դրա համար երեխան պետք է ունենա կամքի ուժ, նպատակասլացություն և այլն: Դա ոչ բոլոր երեխաների մոտ է դրսևորվում, քանի որ ընտանիքը միշտ չէ, որ կարող է պատրաստ լինել սատարելու, և դպրոցն էլ ոչ այնքան հաճախ կարող է երեխաների հետաքրքրությունները և ընդունակությունները զարգացնել: Շատ մեծ դժվարությքամբ են ուսումնական հաստատությունները «հրաժարվում» կարծրատիպ դարձած ուսումնառության միջոցներից: Սոցիալականացումը հաջող անցնելու և ուսումնական նյութը հաջող տիրապետելու համար երեխային անհրաժեշտ է օգնական, խորհրդական: Որտե՞ղ գտնել խելացի, սիրող, պատշաճ ավագ ընկեր, ով կօգնի լուծել խնդիրները, թուլացնել նրանց ճնշումը այդ նուրբ հոգու վրա: Այդպիսի գործառույթներ այսօր դպրոցում կատարում են սոցիալական մանկավարժները և սոցիալական աշխատողները:

## 2. Դպրոցի և ընտանիքի համագործակցության խնդիրները

Այսպիսով, պարզ է դառնում, որ ընտանիքը կենտրոնական տեղ է զբաղեցնում երեխայի դաստիարակության գործում, նրա աշխարհայացքի և բարոյական նորմերի ձևավորման հարցում:

Մյուս կողմից, ընտանիքը – դպրոցական կոլեկտիվի բջիջնրից է: Դպրոցի և ընտանիքի մանկավարժական փոխազդցությունը կայանում է նրանում, որ բարենպաստ պայմաններ են ստեղծվում երեխաների անձնային աճի և զարգացման համար, ակտիվ հասարակական կյանքի ձևավորման համար:

Ծնողների հետ համագործակցության համատեքստում մանկավարժի հիմնական խնդիրն է ակտիվացնել ընտանիքի մանկավարժական, դաստիարակչական գործառույթը, դրան նպատակաուղղվածություն, հասարակական նշանակալիություն հաղորդել:

Ուսումնական-դաստիարակչական գործընթացի բոլոր մասնակիցների փոխազդեցությունները, դրական կենսական օրինակները երեխայի համար և կենսական արժեքները նպաստում են անձի զարգացմանը, կայացմանը:

Մեծ սոցիալական նշանակություն ունի մանկավարժի՝ ընտանիքի հետ նպատակաուղղված հաղորդակցությունը: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը պետք է անհատական լինի, և այդ պատճառով յուրաքանչյուր կոնկրետ դեպքում մանկավարժը պետք է գործի, հաշվի առնելով բազմաթիվ հանգամանքներ. ու՞մ հետ է երեխան բնակվում, ինչպիսի՞ն են նրա կյանքի պայմանները, ինչպիսի՞ն է նրա ընտանիքի սոցիալական կարգավիճակը: Դաստիարակության մեջ տեղին չեն ընհանուր հանձնարարականները, ինստրուկցիաները, մեթոդական մշակումները: Այն հանձնարարականները, որոնք տրվում են մեկ ընտանիքիմ, կարող են տեղին չլինել մեկ այլ ընտանիքի համար: Այսպիսի իրավիճակներում պետք է առաջինը սովորել խուսափել խորհուրդներ տալուց: Դպրոցի գործառույթների մեջ է մտնում տեղեկատվության տրամադրումը, աշակերտների և ծնողների աջակցությունը: Ընտանիքն, իր հերթին, նույնպես արձագանքում է դպրոցին և պատասխան օժանդակող և աջակցող գործունեություն է ծավալում:

Ընտանիքում դաստիարակության գործընթացը կառուցվում է հիմնականում երեխայի հանդեպ սիրո, հոգատարության, փորձի և ավանդույթների հիման վրա: Այս պայմաններում դպրոցի փոխազդեցությունն ընտանիքի հետ թույլ է տալիս մշակել դպրոցի համապատասխան մանկավարժական պրակտիկան և մարտավարությունը, թույլ է տալիս մանկավարժին ճիշտ բառեր և վարվելաձևեր գտնել ծնողների հետ փոխազդեցության ընթացքում:

Ընտանիքի և դպրոցի փոխազդեցության գլխավոր պայմանն է ամբողջական պատկերացումների ձևավորումը երկու ինստիտուտների գործառույթների և գործունեության բովանդակության վերաբերյալ: Որպեսզի այս երկու սուբյեկտները կարողանան հասկանալ մեկը մյուսին, պատկերացնել մեկը մյուսի դաստիարակչական հնարավորությունները, հաշվետու լինել, թե ինչու է արվում այս կամ այն գործողությունը դաստիարակության ընթացքում, հստակ պատկերացնեն դաստիարակության խնդիրները, միջոցները և վերջնական արդյունքը [Самыгин 2010: 55]:

Շատ հաճախ կարելի է նկատել, որ ընտանիքը, ծնողները երեխայի դաստիարակության էստաֆետը փոխանցում են դպրոցին, դրանով իսկ ինքնահեռացվելով դաստիարակության, որպես անձի ձևավորման և կայացման գործընթացից: Մինչդեռ, երեխայի անձի ձևավորման գործին պետք է մասնակցեն երկու կողմերը՝ փոխադարձ լիակարատար համագործակցության և օժանդակության միջավայրում: Ընտանեկան դաստիարակությունը հարաբերություններն փոխանցում է զգացմունքայնություն և էմոցիոնալություն, ենթադրում է ծնողների սերը երեխաների նկատմամբ և երեխաների պատասխան զգաղոցությունները ծնողների հանդեպ: Սակայն, որպեսզի ընտանիքը հաջողությամբ իրագործի դաստիարակչական գործառույթը, այն պետք է տիրապետի հիմնական մանկավարժական պահանջներին և պայմաններ ստեղծի երեխայի դաստիարակության համար:

Այդ պայմաններից է, նախ և առաջ, այն ընտանեկան մթնելերտը, որի պարագայում ծնողները և ընտանիքի յուրաքանչյուր անամ գիտակցում է իր պատասխանատվությունը երեխաների դաստիարակության համար:

Ընդհանուր առմամբ, ընտանեկան ճիշտ դաստիարակության պայմաններն են ռացիոնալ կերպով կազմակերպված կենցաղը, ընտանիքում կյանքի ռեժիմը և այլն:

Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը կառուցելիս պետք է հաշվի առնվեն որոշակի խնդիրներ.

- մեկ երեխայի դաստիարակությունն ընտանիքում;
- ոչ ամբողջական ընտանիքի ազդեցությունը երեխայի վրա;
- ծնողների և երեխաների շփման պակասը՝ հաշվի առնելով ծնողների մեծ զբաղվածությունը և այլն:

Այսպիսով, ընդհանուր առմամբ դպրոցի և ընտանիքի փոխազդեցությունների և համագործակցության մասին պատկերացումները հանգում են այնպիսի դրույթների ճանաչման անհրաժեշտությանը, ինչպիսիք են փոխկապվածությունը, փոխադարձ օժանկակությունը և ամրապնդումը, փոխաարձ լրացումը դաստիարակչական գործընթացում: Այսինքն, այս պարագայում խոսքը գնում է ոչ թե այն մասին, որ ընտանիքի դաստիարակչական գործառույթը նվազում է, այլ այն մասին, որ դպրոցի հետ համագործակցության պայմաններում ընտանեկան դաստիարակությունը ձեռք է բերում էլ ավելի նպատակաուղղված բնույթ: Ըստ էության, և դպրոցը, և ընտանիքը – երկու հավասարազոր և իրավահավասար սուբյեկտներ են, որոնք հավասարապես մասնակցում են սոցիալական դաստիարակության գործընթացին երեխայի մանկական և պատանեկան տարիքում:

Միայն այս պայմանի իրագործման պարագայում հնարավոր է դառնում կազմակերպել աշակերտների աշխատանքային ուսուցումը և մասնագիտական կողմնորոշվածությունը, երիտասարդների մոտ բարձր բարոյական և արժեքային նորմերի ձևավորումը: «Ծնողական հանրությունը» պետք է իրեն ընկալի ոչ թե որպես մանկավարժական կոլեկտիվի «խեղճ ազգակիցը», այլ դրա աջակիցը՝ հստակ դաստիարակչական խնդիրների և հայեցակարգերի մշակման և իրագործման գործում:

Դպրոցի և ընտանիքի համագործակցության պայմաններում ոչ միայն մանկավարժները պետք է նշեն և ընդգծեն ընտանեկան դաստիարակության մեջ առկա թերությունները, այլև ծնողները կարող են ընդգծել համապատասխան թերությունները և բացթողումները դպրոցի և մանկավարժական անձնակազմի գործունեության մեջ: Սակայն, փոխադարձ քննադատությունը պետք է լինի հիմնավորված և կառուցողական: Դրա հիմքում պետք է ընկած լինեն հաստակ փաստեր և

առաջարկություններ, այլ ոչ թե վիրավորանքներ և փոխադարձ մեղադրանքներ [Кравченко 2010: 162]:

Կրթական հաստատության դաստիարակչական գործառույթի իրագործումը պայմանավորում է դպրոցի և ընտանիքի համագործակցության, ինչպես նաև ծնողների և մանկավարժների փոխազդեցության ձևերի և մեթոդների կատարելագործման անհրաժեշտությունը:

Ներկայումս ձևավորվել են դպրոցի և ընտանիքի համագործակցության առավել ռացիոնալ ձևեր. ծնողների ընդհանուր ժողովներ, կոլեկտիվ և անհատական կոնուլտացիաներ, զրույցներ և լեկցիաներ, անհատական շփումներ աշակերտների ընտանիքների հետ, բովանդակությամբ և ձևով տարբեր թեստային նյութերի կազմում և այլն: Ծնողները ներգրավվում են ուսումնական-դաստիարակչական գործընթացի կազմակերպմանը և իրագործմանը:

Այսպիսով, դպրոցի և ընտանիքի համագործակցությունը – դա հետաքրքիր գործընկերային գործունեություն է, որն ուղղված է դաստիարակչական միջավայրի հումանիզացմանը, դպրոցի և ընտանիքի ընդհանուր դաստիարակչական ռազմավարության մշակմանը, համատեղ դաստիարակչական ծրագրերի մշակմանը և իրագործմնը:

## 3. Դպրոցի և ընտանիքի համագործակցության մեթոդները և ձևերը

Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը տեղի է ունենում երեք հիմնական ուղղություններով.

1. Ծնողների հոգեբանական-մանկավարժական գիտելիքների համալրում;
2. Ծնողների ներգրավում մանկավարժական-դաստիարակչական գործընթացի մեջ;
3. Ծնողների մասնակցությունը դպրոցական միջոցառումների կառավարմանը:

Յուրաքանչյուր ուղղություն կարելի է ներկայացնել, որպես գործունեության ձևերի համակարգ: Իսկ յուրաքանչյուր ուղղության շրջանակներում առանձնանում են գործողությունների և գործունեության հստակ ձևեր և մեթոդներ, որոնք կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

1. Ծնողների հոգեբանական-մանկավարժական գիտելիքների համալրում՝ դասաղոսությունների, ասուլիսների, սեմինարների և այլ նմանատիպ միջոցառումների կազմակերպում ծնողների համար;
2. Ծնողների ներգրավում մանկավարժական-դաստիարակչական գործընթացի մեջ՝ բաց դասերի և դասարանային միջոցառումների կազմակերպում, անհատական կամ խմբակային թեմատիկ կոնսուլտացիաների տրամադրում, ստեղծագործական խմբերի ձևավորում, հետաքրքրության խմբերի ձևավորում և այլն;
3. Ծնողների մասնակցությունը դպրոցական միջոցառումների կառավարմանը՝ ծնողական ժողովներ, խմբակների, սեկցիաների, ակումբների ձևավորում և կառավարում, նյութական-տեխնիկական բազայի ամրապնդում և բարելավում, ծնողական վերահսկողություն, դպրոցական խորհուրդ, դասարանային ծնողական կոմիտեներ և այլն:

Դպրոցական պրակտիկայում կիրառվում են մանկավարծների և ծնողների միջև համագործակցության անհատական և խմբակային մեթոդներ: Դրանք բոլորն ուղղված են ծնողների մանկավարժական կուլտուրայի ձևավորմանը և բարձրացմանը, դպրոցի և ընտանիքի միջև համագործակցության և փոխադարձ օժանդակության ամրապնդմանը, դպրոցի և ընտանիքի դաստիարակչական պոտենցիալի ուժեղացմանը, ինչպես նաև ծնողների ներգրավմանը դպրոցական կյանքի և կառավարման համակարգի մեջ:

Դիտարկենք ծնողների և մանկավարժների համագործակցությանբ առավել տարածված ձևերը և մեթոդները, որոնք տեղ են գտել դպրոցական և մանկավարժական պրակտիկայում:

Դասախոսություն – ծնողների հոգեբանական-մանկավարժական գիտելիքների փոխանցման ձև է, որի միջոցով նհարավոր է դառնում լիովին բացահայտել դաստիարակության այս կամ այն խնդրի էությունը: Լավագույն դասախոսը – հենց մանկավարժ-դաստիարակն է, ով լավագույն կերպով է տիրապետում ծնողների հետաքրքրություններին, ծնդիրներին և հոգսերին՝ երեխաների դաստիարակության հետ կապված: Դասախոսության մեջ գլխավոր տարրն է հանդիսանում դաստիարակչական երևույթների, իրավիճակների գիտական վերլուծությունը: Այդ

պատճառով դասախոսության ընթացքում հարկավոր է բացահայտել դաստիարակչական այս կամ այն խնդրի բուն պատճառները, դրանց ընթանալու պայմանները, երեխայի վարքի մեխանիզմները, նրա հոգեկանի զարգացման առանձնահատկություններն և այլն:

Ասուլիս – մանկավարժական գիտելիքների փոխանցման ձև է, որի պարագայում հնարավորություն է ստեղծվում ընդլայնել, խորացնել և ամրապնդել գիտելիքները երեխաների դաստիարակության վերաբերյալ: Ասուլիսները կարող են ունենալ գիտական-գործնական, տեսական, ընթերցողական, փորձր փոխանակման բնույթ: Ասուլիսները, որպես կանոն, հարկավոր է անցկացնել տարին մեկ անգամ, մանրամասն պատրաստվել դրան, նախատեսում են ծնողների ակտիվ մասնակցությունը: Ինչպես նաև, ասուլիսների համար կարող են պատրաստվել օժանդակ նյութեր, ինչպես, օրինակ, աշակերտների աշխատանքների ցուցադրություն, հատուկ ձեռնարկներ ծնողների համար և այլն [Невская 2005: 90-94]:

Բաց դաս – ծնողների և մանկավարժների համագործակցության մի ձև է, որը սովորաբար կազմակերպվում է այն նպատակով, որպեսզի ծնողները հնարավորություն ունենան ծանոթանալու ուսումնական նոր ծրագրերի, ուսուցման մեթոդների, մանկավարժի պահանջների հետ: Առավել հաճախ բաց դասերը գործարկվում են տարրական դասարաններում: Սակայն, տարին գոնե 1-2 անգամ ծնողներին անհրաժեշտ է հնարավորություն տալ մասնակցելու բաց դասերի: Դա թույլ կտա խուսափել բազմաթիվ կոնֆլիկտներից, որոնք սովորաբար ծագում են ծնողների անտեղյակ լինելուց՝ մանկավարժական գործընթացի բոլոր նրբություններից և բարդություններից:

Արտադասարանային միջոցառումներ, որոնք դրսևորվում են սպորտային միջոցառումների, շաբաթօրյակների, տարբեր ցուցահանդեսների և այլ նմանատիպ միջոցառումների ձևով: Այս ամենը թույլ է տալիս երեխաներին ավելի լավ ճանաչել իրենց երեխաներին, բացահայտել նրանց հետաքրքրությունները և ընդունակությունները:

Անհատական թեմատիկ խորհրդատվություններ: Հաճախ բարդ մանկավարժական խնդիրների լուծումները ուսուցիչները կարող են ստանալ անմիջապես ծնողներից, և այդ օգնությունից կամ հնարավորությունից պետք չէ

խուսափել կամ հրաժարվել: Ծնողների և մանկավարժների միջև խորհրդատվությունները օգտակար են երկու կողմերի համար: Այս պարագայում ծնողները ռեալ պատկերացումներ են ձեռք բերում դրպոցական իրավիճակի, երեխաների վարքի և այլ խնդիրների շուրջ, իսկ մանկավարժը հնարավորություն է ստանում ձեռք բերելու իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը և տվյալները յուրաքանչյուր աշակերտի առավել խորը ընկալման համար: Տղեկատվության փոխանակման արդյունքում երկու կողմերն էլ կարող են ընդհանուր համաձայնության գալ ծնողական օժանդակության կոնկրետ ձևերի շուրջ:

Նամակագրություն ծնողների հետ – երեխաների հաջողությունների կամ անհաջողությունների մասին տեղեկացնելու գրավոր ձևն է, որի միջոցով մանկավարժը անմիջական կապ է պահում ծնողների հետ: Այն թույլ է տալիս տեղյակ պահել այս կամ այն խնդրի շուրջ, նախատեսվող իրադարձությունների մասին: Նամակագրության միջոցավ նաև կարելի է փոխադարձ շնորհավորանքներ հղել այս կամ այն տոնի առթիվ, ինչը ևս նպաստում է ծնողների և մանկավարժների համագործակցության ամրապնդմանը և բարյադրացական մթնոլորտի պահպանմանը: Նամակագրության կարևոր նախապայմանն է բարյացակամ խոսելաձևը, շփման ուրախությունը:

Ծնողական ժողովներ – մանկավարժների և ծնողների համագործակցության թերևս ամենատարածված և կիրառելի ձևն է: Ժողովների ընթացքում մանկավարժը քննարկում է ծնողների հետ բոլոր արդիական դպրոցական թեմաները, որոնք կապված են աշակերտների ուսումնական հաջողությունների և անհաջողությունների, համատեղ ծրագրերի, միջոցառումների, կազմակերպչական հարցերի և բազմաթիվ այլ խնդիրների հետ: Ի դեպ, դասարանական ծնողական ժողովները արդյունավետ են լինում հենց այն պարագայում, երբ դրանց ժամանակ քննարկվում են ոչ միայն աշակերտների առաջադիմության հետ կապված խնդիրները, այլև ընդհանուր մանկավարժական խնդիրները՝ կապված այդ դասարանի աշակերտների զարգացման, դաստիարակության հետ:

## Եզրակացություն

Երեխայի հետազոտման, նրա լավագույն որակների և հատկությունների բացահայտման ու զարգացման հարցերում դպրոցի և ընտանիքի փոխներգործության շարժառիթն այդ կառույցների ընդհանուր հետաքրքրություններն են: Այդպիսի փոխհարաբերությունների հիմքում միմյանց նկատմամբ վստահության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության և օժանդակության, համբերատարության սկզբունքներն են: Դրանք օգնում են ուսուցիչներին և ծնողներին՝ համատեղ ջանքերով երեխայի ինքնորոշման, ինքնակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ որակների ու հատկությունների ձևավորման պայմաններ ստեղծել: Երեխաներին, ծնողներին և ուսուցիչներին միավորում են ընդհանուր մտահոգություններն ու խնդիրները, որոնց լուծումներն էապես պայմանավորված են դրանց փոխներգործության և համագործակցության բնույթով: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը նպատակասլաց և երկարատև աշխատանք է, որն ամենից առաջ ենթադրում է ընտանիքի, երեխայի ընտանեկան դաստիարակության պայմանների ու յուրահատկությունների բազմակողմանի և համակարգված ուսումնասիրություն:

Այդ երկու ինստիտուտների համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվեն պլանավորված ու համակարգված ձևով: Ծնողները և ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են: Հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում, երբ ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, համատեղ ուժերով մշակվեն դաստիարակչական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:

Ուսուցիչների և ընտանիքի փոխներգործության բնույթը պլանավորված է դպրոցի նկատմամբ ծնողների վերաբերմունքով, ինչպես նաև այն հանգամանքով, թե վերջիններս, ըստ իրենց իմացական կարողությունների, հայացքների ու դիրքորոշումների, որտեղ են իրենց տեսնում դաստիարակության գործընթացում: Դպրոցի և ծնողների համագործակցության հիմքը խմբային ու անհատական աշխատանքի ձևերն են:

Միաժամանակ կան հիմնախնդիրներ. որոնք մտահոգում են բոլոր ծնողներին կամ էլ կապված են դասարանում երեխաների դաստիարակության գործընթացի հետ: Այդպիսի հարցերը քննարկվում են ընդհանուր ժողովների ժամանակ: Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են դասարանական ժողովների ժամանակ առաջացած խնդիրները, դրանց փոխներգործության կայացման առումով էական նշանակություն ունի ուսուցիչների շփման ոճը:

Դպրոցի և ընտանիքի համագործակցության և փոխներգործության ամենաարդիական և պահանջված ուղղություններից մեկն այսօր, թերևս երեխաների ծնողների համար խորհրդատվությունների կազմակերպումն է:

Մանկավարժական խորհրդատվությունները հիմնականում կրում են անհատական բնույթ: Դրա անհրաժեշտությունը ծագում է այն ժամանակ, երբ իրավիճակը դառնում է ծայրահեղ, ու պահանջվում է արտակարգ օգնություն: Այս փուլում գլխավոր խնդիրը ոչ միայն մանկավարժական տեղեկատվությամբ ընտանիքն ապահովելն է, այլև ծնողներին հուզական աջակցություն ցույց տալը:

Այսպիսով մանկավարժները և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության՝ երեխայի կյանքը լիարժեք չէ: Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց կարեկցելու կարողությունը: Անձի ներդաշնակ զարգացման համար այդ երկու որակներն էլ խիստ անհրաժեշտ են:

## Օգտագործված գրականության ցանկ


1. Մանկավարժության ընդհանուր հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ բուհերի համար // խմբագիր՝ Հ. Մ. Մախչանյան, - Եր., 1997
2. Տարիքային և մանկավարժական հոգեբանություն // խմբագիր՝ Ա. Վ. Պետրովսկի, - Եր., 1997
3. Азаров Ю.П. Семейная педагогика. – Спб.: Питер, 2011
4. Бороздина Г.В. Психология и педагогика / под ред. Баркова Г.А. – М.: Юрайт-Издат, 2011
5. Кравченко А.И. Психология и педагогика: учебник. – М.: Инфра-М, 2010
6. Невская С.С. Макаренко о педагогическом взаимодействии семьи и школы // Педагогика. - № 9, 2005
7. Самыгин С.И., Латышева А.Т., Сущенко С.А. Педагогика. – М.: Феникс, 2010
8. Семья и личность / под ред. Е.И. Сермяжко. – Могилев: МГУ им. Кулешова, 2003